# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 154-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՇՈՂԻԿ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով և հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Բարձրունի բնակավայրի բնակիչ Շողիկ Վարազդատի Ալեքսանյանի /ծնվ. 18.11.1958թ/ սեփականություն իրավունքը Վայք համայնք գյուղ Բարձրունի, 13-րդ փ. 3 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:
2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը:
3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru


*25 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 155-Ա

## ԵՐԵՎԱՆ- ՄԵՂՐԻ Մ2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ 139 ԿՄ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՐԱԿԻՑ «ԳԵՏԻԿ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 16-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Թույլատրել Երևան-Մեղրի Մ2 միջպետական ճանապարհի 139 կմ հատվածի հարակից «Գետիկ» կոչվող տարածքում գտնվող թվով 4 (բարդի) ծառերը հատել, քանի որ դրանք աճել են հանդամիջյան ճանապարհին և խոչնդոտում են հացահատիկի հունձ իրականացնող գյուղատնտեսական տրանսպորտային միջոցների տեղաշարժին:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*28 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 156-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԳԻԿ ՍԱՐԳԻՍԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 27.77 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող Գագիկ Սարգիսի Բեգլարյանին պականող բնակավայրերի նպատակային նշանակության 27.77 քմ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության ավտոտնակը հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ս.Շահումյան փ.14/5 ավտոտնակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*28 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 157-Ա

## «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ- ԻՆ 16.05.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 08 ԵՎ 09 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասի» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 956-Ն որոշմամբ և հաշվի առնելով պատվիրատուի դիմումը.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին Վայք համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի մայիսի 16-ին տրված թիվ 08 և 09 շինարարության թույլտվությունների գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ... ՎԱՅՈՑ ... *08917547*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*28 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 158-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.40 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող 10-034-0106-000 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 1.40 հա հողամասի գործառնական նշանակությունը արոտավայրից դարձնել ավելի բարձրարժեք խոտհարք: Հաշվի առնել այն հանգամանքը, որ նշված արոտը չի հանդիսանում ընդհանուր օգտագործման տարածք:
2. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող 1.40 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը, հողատեսքը՝ խոտհարք ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Ֆինանսական բաժնին կատարել համապատասխան վճարումներ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*28 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 159-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2.45251 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Գոմք բնակավայրում գտնվող 10-019-0317-000 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.45251 հա հողամասի գործառնական նշանակությունը արոտավայրից դարձնել ավելի բարձրարժեք խոտհարք: Հաշվի առնել այն հանգամանքը, որ նշված արոտը չի հանդիսանում ընդհանուր օգտագործման տարածք:
2. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Գոմք բնակավայրում գտնվող 2.45251 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը, հողատեսքը՝ խոտհարք ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Ֆինանսական բաժնին կատարել համապատասխան վճարումներ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*28 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 160-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԹԻՎ 102-Ա «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆԳԵԼԻՆԱ ԼԵՎԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ, անչափահաս Անգելինա Լևիկի Հովհաննսյանը /ծնված 20.01.2016թ./ ներկայումս գտնվում է հոր՝ Լևիկ Հովհաննիսյանի խնամքի ներքո, ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 01.06.2022 թվականի թիվ 102-Ա «Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ անչափահաս Անգելինա Լևիկի Հովհաննսյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու և խնամակալ նշանակելու մասին» որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*29 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 161-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16.06.2023Թ-Ի ԹԻՎ 113-Ա ԵՎ 23.06.2023Թ-Ի ԹԻՎ 119-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 16.06.2023 թվականի թիվ 113-Ա և 23.06.2023 թվականի թիվ 119-Ա որոշումների հղման մեջ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 956-Ն որոշմամբ» բառերի փոխարեն գրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*29 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 162-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30.06.2023Թ-Ի ԹԻՎ 121-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 30.06.2023 թվականի թիվ 121-Ա որոշման բովանդակության մեջ «Վայք համայնքի ղեկավարի 31.03.2022 թվականի թիվ 49-Ա » բառերի փոխարեն գրել «Վայք համայնքի ղեկավարի 31.08.2022 թվականի թիվ 169-Ա » բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*31 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 163-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԹԻՎ 131-Ա «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,010 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի ղեկավարի 25.07.2023 թվականի թիվ 131-Ա «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Չառիթափ բնակավայրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,010 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության բնակելի տունը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   ա/Որոշման վերնագրում «որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և» բառերը հանել,
   բ/ Որոշման բովանդակության 1-ին կետում «ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և » բառերը հանել,
   գ/Որոշման բովանդակության 2-րդ և 3-րդ կետերն ամբողջությամբ հանել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*31 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 164-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱՇԵՍ ՆՈՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով և հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի բնակիչ Արտաշես Նորիկի Սարգսյանի /ծնվ. 11.06.1961թ/ Վայք համայնք գյուղ Զառիթափ, 1-ին փ.45 հասցեում գտնվող 0.11674 հա մակերեսով հողամասի, բնակելի տան և օժանդակ շինության սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 165-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ՖԵԴԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5.1 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետերի համաձայն և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ և 17-րդ կետերով, և հիմք ընդունելով Արտաշես Սարգսյանի դիմումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 1-ին փ. 45 հասցեում գտնվող գտնվող քաղ. Արտաշես Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա իր իսկ կողմից կառուցված 86,8 քմ մակերեսով 2023ZES4TZ հաշվառման ծածկագրով անասնագոմը համարել օրինական:
2. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 86,8 քմ մակերեսով կառույցը ճանաչել օրինական, սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Արտաշես Սարգսյանին շինության համար վճարել 32863 /86.8 x 378.6/ ՀՀ դրամ :
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ